## ՄԵԾ ՍԱԼԱ

*Հայաբնակ այս գյուղում համեմատաբար բավոք վիճակում պահպանվել է միակ արժեքավոր հուշարձանը՝ ս. Աստվածածին եկեղեցին. որը կառուցվել է 1780-ական թվականներին, գյուղի հիմնադրումից հետո: Հուշարձանը գտնվում է գյուղամիջյան մեծ հրապարակում: Ներսի պատերին պահպանվել են նորագույն շրջանի որմնանկարներ, որոնցից երկուսի տակ կան արձանագրություններ:*

*534.* Հյուսիսային որմնապատկերի տակ՝

ՑԻՇԱՏԱԿ Է Մ[Ա]Հ[ՏԵՍ]Ի ԲԱՂԴԱՍԱՐԷ ՄՀԻԱՆՑ ՍԲ ԱԾԱԾՆԱ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՄԵԾ ՍԱԼԱՅԻ 1892 ԱՄԻ, 2-Ն ՆՈՅԵՄԲԵՐԻ:

*535.* Հարավային որմնապատկերի տակ՝

ՑԻՇԱՏԱԿ ԵԿԵՂԵՑԻՈՅՍ ՄՀԻԵԱՆՑ Հ. ՄՕՐՆ Մ[Ա]Հ[ՏԵՍ]Ի ՄԱՐԹԱՑԻ ԳՎԻՆ ՍԲ ԱԾԱԾՆԱ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՄԵԾ ՍԱԼԱՅԻ 1893 ԱՄԻ, 2-Ը ՆՈՅԵՄԲԵՐԻ:

### Մեծ Սալայի գերեզմանոց

*536.* Տապանաքար, *թեավոր խաչի անսքով, սառրին պատվանդանին՝ միայն թվականը. 1856:*

*537.* Տապանաքար, *գորշ ավազաքարից 6 տող. երեսին՝*

ԾՆԵԱԼ Է 1871 ԴԻՎԻՆ/ ՄԷԾ ՍԱԼԱՑ ԳԻՒՂՈՒՄ/ ԿԱՐԱՊԵՏ ՄԱՐԿՈՍՕՎ/ ՊԱՑՊԻՋԻՕՎ/. ՎՕՂՃԱՆԱԾ Է 1914-ԻՆ/, ԱՊՐԻԼԻ 11-ԻՆ:

*538. Երկաթաձույլ կոթող, վրան՝ 2 տող.*

ԱՍՏ ՀԱՆԳՉԻ ՄԱՐՄԻՆ ՆԵՐՍԷՍ ԽԱՉԳՐՈՒՋԵԱՆ ԽԼԻԵԱՆՑԻ./ ՎԱԽՃ. 7 ՅՈՒԼ. 1900 ԱՄԻ 38 ԱՄ[ԱՑ]:

*539.* Երկաթաձույլ կոթող, *տապանաձև, 5 տող. երեսին՝*

ԱՍՏ ՀԱՆԳՉԻ ՄԱՐՄԻՆ ՎԱՂԱԹԱՌԱՄ/ ԿԱՐԱՊԵՏԻ ՄԵԼՔՈՆԵԱՆ/ ՏՈՄԲԱՅԵԱՆՑ./ ԾՆ. 1-Ն ՄԱՐՏԻ/ 1892 ԱՄԻ. ՎԱԽՃ. Ի 27-Ն ՕԳՈՍՏ. 1909 ԱՄԻ:

*540.* Տապանաքար *գորշ ավազաքարից, վրան՝ 3 տող.*

ՍՏԵՓԱՆՈՍ ՄԵԼՔՈՆԵԱՆ/ ՏՈՄԲԱՅԵԱՆՑ/ ԾՆ. 1871, ՎԱԽՃ. 24 ՓԵՏՐ. 1911:

*541.* Տապանաքար, *նույնատիպ, վրան՝ 3 տող.*

ԳԱԲՐԻԵԼ ՀԱԿՈԲԵԱՆ/ ԳՈՄԲԱՅԵԱՆՑ/ 1894-1910:

*542* Տապանաքար *նույնատիպ, վրան՝ 3 տող.*

ՀՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ/ ԼՈՒՍՊԻՔԱՅԵԱՆ/ 1854-1908:

## ՓՈՔՐ ՍԱԼԱ (ՍՈՒԼԹԱՆ ՍԱԼԱ)

*Գյուղը հիմնադրել է 1780 թ.: Նույն ժամանակամիջոցում կառուցվել է (գյուղի արևելյան մասում) աեղի ս. Գևորգ եկեղեցին՝ ոչ հայկական ճարտարապետական հորինվածքով: Շինանյութը, ինչպես թվարկած գյուղական եկեղեցիներինը՝ կարմրավուն թրծած աղյուսն է: Պահպանման վիճակը նախանձելի չէ: Պատերին չունի ոչ մի հիշատակագրություն:*

*Գյուղից դեպի արևելք, շուրջ 200 մ հեռավորությամբ պանվում է մինչև օրս գործող*